# ԽԱՉԻԿ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՅՕԴՈՒԱԾԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԳՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Համո Սուքիասեան

*Անուանի պատմաբան, ազգագրագէտ, իրաւագէտ ու արխիւագէտ, Խորհրդային Հայաստանում արխիւային գործի հիմնադիր Խաչիկ Սամուէլեանը ծնուել է 1873 թ. օգոստոսին Ղրիմի Կերչ քաղաքում՝ քահանայի ընտանիքում: Միջնակարգ կրթութիւնը ստացել է Թէոդոսիայի գիմնազիայում, բարձրագոյնը՝ Պետերբուրգի (1895-1900 թթ.) եւ Ենայի (1901-1903 թթ.) համալսարաններում՝ ստանալով իրաւաբանի որակաւորում: Երիտասարդական տարիներից նա ակտիւօրէն մասնակցել է սոցիալ-դեմոկրատական շարժումներին: 1900 թ. Պետերբուրգում ուսանողական շարժումներին մասնակցելու, իսկ 1906 թ. Թիֆլիսում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանուորական կուսակցութեան անդամ հանդիսանալու պատճառով ցարական ոստիկանութեան կողմից ձերբակալուել է[1]:*

*Զափազանց ընդգրկուն է Խ. Սամուէլեանի աշխատանքային գործունէութիւնը: Այսպէս՝ 1904-1905 թթ. եղել է Թիֆլիսի «Кавказское сельское хозяйство» շաբաթաթերթի քարտուղար, 1907-1909 թթ. ռուսաց լեզու, իրաւագիտութիւն ու տնտեսագիտութիւն է դասաւանդել էջմիածնի Գեւորգեան հոգեւոր ճեմարանում, 1909-1912 թթ. ուսուցչութիւն է արել Նոր Նախիջեւանի թեմական դպրոցում, 1912 թ.՝ Թիֆլիսի Յովնանեան օրիորդական դպրոցում, 1912-1913 թթ.՝ Թիֆլիսի երկրորդ առեւտրական դպրոցում: 1913-1914 թթ. նա եղել է «Тифлисский листок» օրաթերթի խմբագրութեան քարտուղար, 1914-1917 թթ.՝ Շուշիի թեմական դպրոցի տեսուչի օգնական, ապա՝ տեսուչ, 1917-1919 թթ.՝ մանկավարժական գործունէութիւն է ծաւալել Բաքւում: Հայաստանի անկախութեան վերականգնումից յետոյ Խ. Սամուէլեանը 1919 թ. տեղափոխուել է Երեւան եւ ստանձնել ՀՀ արդարադատութեան նախարարութեան դիւանապետի օգնականի պաշտօնը, այնուհետեւ պաշտօնավարել է Ալեքսանդրապոլում: 1919-1920 թթ. եղել է քաղաքի արական գիմնազիայի տեսուչ, 1920-1921 թթ.՝ քաղաքային դպրոցների հրահանգիչ[2]: Թուրքական ռազմակալման աւարտական շրջանում՝ 1921 թ. ապրիլի 10-ից, Ալեքսանդրապոլի քաղաքային վարչութեան յանձնարարութեամբ ձեռնամուխ է եղել քաղաքային գրադարանի կարգաւորմանը[3]: Խորհրդային Հայաստանի լուսժողկոմ Աշոտ Յովհաննիսեանի՝ 1921 թ. մայիսի 10-ի հրամանով Խ. Սամուէլեանը նշանակուել է էջմիածնի տպարանի վարիչ՝ փոխարինելով Ս. Մահտեսի-Յակոբեանին[4]: Միաժամանակ 1921-1922 թթ. եղել է էջմիածնի գիտական ինստիտուտի կոլեգիայի անդամ, 1922-1923 թթ.՝ Հայաստանի կենտգործկոմին առընթեր օրէնսդրական յանձնաժողովի, 1923 թ.՝ Երեւանի յեղափոխական տրիբունալի, 1923-1924 թթ.՝ հանրապետական, ապա՝ գերագոյն դատարանի անդամ, դասաւանդել է Երեւանի համալսարանում[5]:*

*Արդէն 1924 թ. մարտի 1-ին Խ. Սամուէլեանը նշանակուել է Խորհրդային Հայաստանի պետական կենտրոնական արխիւի վարիչ՝ պաշտօնավարելով մինչեւ 1931 թ.: Այնուհետեւ մինչեւ 1934 թ. եղել է Պետական արխիւի վարիչի տեղակալ: Նա անուրանալի աւանդ ունի Հայաստանում արխիւային գործի սկզբնաւորման ու կարգման, արխիւային փաստաթղթերի յայտնաբերման եւ պետարխիւում կենտրոնացնելու գործում՝ լինելով Խորհրդային Հայաստանի արխիւային գործի հիմնադիրը[6]:*

*Խ. Սամուէլեանը 1932-1935 թթ. եղել է Հայաստանի կուլտուրայի պատմութեան ինստիտուտի իսկական անդամ[7]: 1935 թ. նա պաշտօնավարել է Պատմութեան եւ գրականութեան ինստիտուտում, այնուհետեւ՝ ԽՍՀՄ Գիտութիւնների ակադեմիայի հայկական մասնաճիւղի (Արմֆան) համակարգում. Արմֆան-ի նախագահութեան որոշմամբ, իբրեւ Պատմութեան սեկտորի աւագ գիտաշխատող, Խ. Սամուէլեանի աշխատավարձը 1937 թ. սեպտեմբերի 1-ից սահմանուել է 800 ռուբլի[8]: 1940 թ. մայիսի 15-ին նա Արմֆան-ի Պատմութեան եւ նիւթական կուլտուրայի ինստիտուտի աւագ գիտաշխատող էր[9]: Սրտանոթային հիւանդութիւններով տառապող Խ. Սամուէլեանը յանկարծամահ է եղել նոյն թուականի հոկտեմբերին 16-ին Երեւանում[10]:*

*Գրական-գիտական գործունէութիւնը սկսելով 1897 թ.՝ Խ. Սամուէլեանն աշխատակցել է Անդրկովկասի հայալեզու եւ ռուսալեզու թերթերին, Մխիթարեանների «Բազմավէպ» եւ «Հանդէս ամսօրեայ» պարբերականներին, կատարել թարգմանութիւններ, տպագրել գիտական ուսումնասիրութիւններ[11]: 1906-1914 թթ. նա եղել է Հայոց ազգագրական ընկերութեան հիմնադիր անդամ, ինչպէս նաեւ՝ Երուանդ Լալայեանի խմբագրած «Ազգագրական հանդէս»-ի խմբագրակազմի անդամներից մէկը[12]: Խ. Սամուէլեանը հայագիտութեան պատմութեան մէջ իր հաստատուն տեղն է զբաղեցնում հրատարակած մի շարք արժէքաւոր հետազօտութիւնների շնորհիւ[13]:*

*Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանում եւ Հայաստանի ազգային արխիւում մեր գիտահետազօտական աշխատանքների ընթացքում ծանօթացանք Խաչիկ Սամուէլեանի գրչին պատկանող անտիպ մնացած արժէքաւոր հետազօտութեան՝ նուիրուած ցարական վարչակարգի օրօք Արեւելեան Հայաստանում (մասնաւորապէս՝ Երեւան եւ Ալեքսանդրապոլ քաղաքներում) հրատարակուած հայկական պարբերականների դէմ ծաւալուած գրաքննական հալածանքներին: Այն անթուակիր է: Յօդուածի վերնագրում պարզաբանուած է, որ պատրաստուել է Հայաստանի պետական կենտրոնական արխիւում պահուող փաստաթղթերի հիման վրայ: Յօդուածի աւարտուն տարբերակի բոլոր էջերին առկայ է Խորհր-*

1 Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 740, g. 1, գ. 167, թ. 14:

2 Նոյն տեղում, թ. 14-15:

3 Նոյն տեղում, թ. 1:

4 ՀԱԱ, ֆ. 122, g. 4, գ. 6, թ. 18 շրջ.:

5 ՀԱԱ, ֆ. 740, g. 1, գ. 167, թ. 15:

6 Տե՛ս **Մ. Մարտիրոսեան**, *Արխիւային գործի հիմնադիրը*,- «Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան, 2004, թիւ 1, էջ 23-30:

7 ՀԱԱ, ֆ. 740, g. 1, գ. 167, թ. 19:

8 Նոյն տեղում, գ. 175, թ. 1:

9 Նոյն տեղում, գ. 167, թ. 11:

10 **Կ. Վ. Մելիք-Փաշայեան**, *Խաչիկ Սամուէլեան (ծննդեան 100-ամեակի առթիւ)*,- «Պատմաբանասիրական հանդէս», Երեւան, 1974, թիւ 1, էջ 96:

11 Պարբերական մամուլում Խ. Սամուէլեանի հրատարակած հիմնական աշխատութիւնների ցանկը տե՛ս ՀԱԱ, ֆ. 740, g. 1, գ. 167, թ. 17 եւ շրջ.:

12 ՀԱԱ, ֆ. 740, g. 1, գ. 167, թ. 19:

13 Տե՛ս **Խ. Սամուէլեան**, *Հայ սովորութեական իրաւունքը: Հին հայոց իրաւունքը եւ նրա հետազօտութեան մեթոդը: Առեւանգմամբ ու գնմամբ ամուսնութիւն: Ուսումնասիրութեան փորձ*, Թիֆլիս, 1911, 104 էջ, նոյնի՝ *Մխիթար Գօշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրաւունքը: Փորձ ուսումնասիրութեան*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1911, 344 էջ, նոյնի՝ *Հին Հայաստանի կուլտուրան*, հտ. I, Երեւան, Պետհրատ, 1931, 382 էջ, հտ. II, Երեւան, ԱրմՖԱՆ, 1941, 342 էջ, հտ. III, Երեւան, ԱրմՖԱՆ, 1941, 360 էջ, նոյնի՝ *Հին հայ իրաւունքի պատմութիւնը*, հտ. 1, Երեւան, ԱրմՖԱՆ, 1939, 363 էջ, նոյնի՝ *Հայ ժողովրդի պատմութիւն*, մաս 1, Գահիրէ, «Սահակ-Մեսրոպ» հրատ., 1946, 100 էջ եւ այլն:



© National Library of Armenia

դային Հայաստանի Գլաւլիտի կնիքը՝ «ՀՍԽՀ ԼԺԿ Գրառեպգլխվարչութիւն, ССРА Наркомпрос Главлит» մակագրութեամբ: Այս հանգամանքից դատելով՝ խնդրոյ առարկայ տեքստը կա՛մ գրուել է Հայգլաւլիտի համար, կա՛մ էլ (ինչն առաւել հաւանական եւ տրամաբանական է) Հայգլաւլիտի աշխատակցի կողմից գրաքննուել է եւ, հաշուի առնելով դրա քաղաքական առանձնայատկութիւնը, բոլոր էջերի վրայ կնիք է դրուել:

Վստահաբար կարելի է պնդել, որ մեզ հետաքրքրող անթուակիր ուսումնասիրութիւնը Խ. Սամուէլեանը գրել է Պետական կենտրոնական արխիւում պաշտօնավարելու տարիներին: Տրամաբանական է կարծել, որ այն շարադրուել է 1920-ականների վերջին, ինչպէս հանրապետութիւնում պահուող արխիւային փաստաթղթերի հիման վրայ Խ. Սամուէլեանի պատրաստած այլ տեղեկատու-ուսումնասիրութիւնները (դրանց բնագրերը պահւում են ՀԱԱ-ի՝ իր անունը կրող ֆոնդում):

Սոյն հրապարակումը պատրաստելիս հիմք ենք ընդունել տեքստի՝ Գրականութեան եւ արուեստի թանգարանում պահուող ինքնագիր բնագիր օրինակը: Այն համեմատուել է Հայաստանի ազգային արխիւում պահուող սեւագիր օրինակի հետ: Հրապարակման ընթացքում պահպանել ենք հեղինակի շարադրանքի լեզուաոճական առանձնայատկութիւնները: Յաւելում-միջամտութիւնները կատարել ենք ուղղանկիւն փակագծերում ([]), գրել անհրաժեշտ ծանօթագրութիւններ, կատարել ճշգրտումներ:

Խաչիկ Սամուէլեանի գրչին պատկանող սոյն ուշագրաւ ուսումնասիրութիւնն արեւելահայ մամուլի գրաքննութեան պատմութեան ուսումնասիրութեան կարեւոր աղբիւր է, ուր ուշագրաւ տեղեկութիւններ կան ինչպէս գրաքննական գործընթացի կազմակերպման, այնպէս էլ Երեւանի «Պսակ», «Նոր ձայն», «Խօսք», Ալեքսանդրապոլի «Ժայռ», «Արագած» թերթերի գրաքննութեան, պարբերականների՝ գրաքննիչների «ուշադրութեանն արժանացած» հրապարակումների վերաբերեալ: Հասկանալի է, որ հեղինակի վկայակոչած օրինակներով չեն սահմանափակւում ցարական ժամանակներում Երեւանի նահանգի տարածքում հրատարակուած պարբերականների գրաքննութեանը վերաբերող փաստերը: Մասնաւորապէս՝ շարադրանքում տեղեկութիւն չկայ իշխանութիւնների կողմից Էմին Տէր-Գրիգորեանի հրատարակած «Երեւանի յայտարարութիւններ» հայալեզու թերթի փակման մասին: Բնականաբար, սա եւ նման մէկ-երկու փաստերն ամենեւին չեն ստուերում Խ. Սամուէլեանի աշխատանքի արժէքը:

Խ. Սամուէլեան

## Գրաքննական հալածանքը պարբերական մամուլի դէմ ցարական Հայաստանում (Հայաստանի կենտրոնական արխիւի նիւթերից)

### I

Մեզանից շատերի յիշողութեան մէջ տակաւին չեն մարել մի շարք բնորոշ երեւոյթներ, որոնք կապուած են ցարական բռնակալութեան ներքոյ ճնշուած քաղաքական-հասարակական կեանքի հետ: Այդպիսի երեւոյթներից մէկն էր գրաքննութիւնը՝ ցենզուրան, որ ծանր կապարով իջնում էր մամուլի եւ ընդհանրապէս ամէն մի տպագրական խօսքի վրայ: Առաւել ծանր ու օրհասական էին լինում գրաքննութեան հետեւանքները գաւառի մտաւոր-հասարակական կեանքի համար, որտեղ միշտ առանց այն էլ սովորաբար թոյլ էր բաբախում մտաւորական երակը, դանդաղում էր ամէն մի կուլտուրական գործունէութիւն: Այդպիսի մի գաւառական բուն էր հանդիսանում նաեւ Երեւանը՝ նահանգական կենտրոնը, Անդրկովկասի ծայրամասում ընկած, կուլտուրայի յետամնաց մի քաղաք, որի վրայ կենտրոնական ցարական կառավարութիւնը, այնուամենայնիւ, կասկածոտ աչքերով էր նայում եւ իր ռուսացման քաղաքական նպատակներով բնաւ շահագրգռուած չէր սատարելու նրա տնտեսական զարգացմանը, կուլտուրական առաջադիմութեանը: Նոյն վիճակում էր գտնւում Երեւանեան նահանգի միւս գաւառական բոյնը՝ Ալեքսանդրապոլը (այժմեան Լենինականը):

Ահա այդ ժամանակուայ Երեւանում գոյութիւն ունէր, ի հարկէ, նահանգական վարչութեանն առընթեր տեղական գրաքննութիւն, որ, իր հերթին, ենթարկւում էր Կովկասեան գրաքննական կոմիտէին Թիֆլիսում: Այդ ցենզուրան, որ քննութեան էր առնում ձեռագրերը նախքան տպագրելը, աչքի էր ընկնում իր խստութեամբ, շատ անգամ էլ իր ծիծաղելի անհեթեթութեան եւ կուրիոզների հասնող իր հալածանքներով, առաւելապէս այն ռէակցիօն ժամանակաշրջանում, որ ընկնում է 1905 թ. յեղափոխութիւնից առաջ:

Այսպիսի պայմաններում խմբագիրներն ու գրողներն էլ իրենց հերթին դիմում էին զարտուղի ճանապարհների, զանազան սրամիտ միջոցների, այսպէս կոչուած, «Եզովպոսի[14] լեզուից» սկսած մինչեւ խմբագրական-հրատարակչական «ֆոկուս-պոկուսներին»՝ նպատակ ունենալով կուրացնել գրաքննութեան աչքերը, խաբել ցարական բթամիտ ցենզորներին:

Ահա այդօրինակ բնորոշ պատմութիւն է ներկայացնում Երեւանում 1881-1883 թթ. քաղաքացի Վասակ Պապաջանեանի խմբագրութեամբ հրատարակուող «Պսակ» շաբաթաթերթի[15] կեանքը: Պէտք է ասած, որ այն ժամանակների հայ մտաւոր-հասարակական կեանքը պտտւում էր գլխաւորապէս կաթողիկոսական, եկեղեցական, ծխական-դպրոցական, բարեգործական-ընկերական հարցերի շուրջը: «Պսակ»-ն էլ, իբրեւ այն ժամանակուայ Երեւանի հասարակական կեանքում առաջադէմ-լիբերալ համարուող հոսանքի ներկայացուցիչ, եռուն մասնակցութիւն էր յայտնաբերում վերոյիշեալ հարցերի շուրջը: Այդ շաբաթաթերթի դէմ գրաքննական ատեանը յարուցել էր մի երկար գրագրութիւն թէ՛ Երեւանի նահանգապետի եւ թէ՛ գրաքննական գլխաւոր վարչութեան հետ Պետերբուրգում:

Առաջին առիթն եղել էր այն, որ յիշեալ լրագրի 1883 թ. 7-ում տպագրուել էին երկու յօդուած (մէկը առաջնորդող՝ «Միթէ՞ պիտի չլսենք», իսկ միւսը բանասիրական՝ «Մի խնդիր» խորագրով), որոնք, ինչպէս հաղորդում էր Երեւանի նահանգապետը Կովկասեան գրաքննական կոմիտէին, «խիստ անյարմար են իրենց բովանդակութեամբ». այդտեղ արծարծւում էր կաթողիկոսական ընտրութեան հարցը եւ շեշտւում էր այն միտքը, թէ Էջմիածնի կաթողիկոսութեանն անհրաժեշտ է Պոլսի պատրիարքի միջոցով իր ներկայացուցիչներն ունենալ եւրոպական պետութիւնների մէջ: Նահանգապետն այդ յօդուածի հե-

14 Եզովպոս (Ք.ա. Զ. դար). յոյն յայտնի առակագիր, առակագրութեան ժանրի սկզբնաւորողը:

15 Իրականում Վասակ Պապաջանեանի (1847-1893) խմբագրութեամբ «Պսակ» շաբաթաթերթը Երեւանում հրատարակուել է 1880 թ. մարտի 15-ից մինչեւ 1884 թ. ապրիլի 7-ը:

© National Library of Armenia